ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ

Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 25.06.2019 թ. թիվ 08 արձանագրությամբ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը և «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների 89-րդ կետը խախտելու համար ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու և դրանք բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ
ՀՀ, 0010 Երևան, Հանրապետության 22
Հեռ. (+374 11) 55 17 55, ՀՎՀՀ 02709202
Էլ. փոստ info@paap.am, www.appa.am